



“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆՔ ՏՆՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ԳՈՆ” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ 2.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. ԴԵԿՏԵՄԲԵՐ 1. 1877.

ԹԻՒ 12.



ԳՈՒԳԻՆ ԱՆՏԱՐԻ ՄԷՋ

ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻՆ ՀՆԱՐՈՒՒԼԸ

Հին ատենը գիրքերը կ'օրինակու էին, Որովհետև հիմա հինգ դահեկան արժող գիրք մը, եթէ օրինակուի, երկու կամ երեք հարիւր դահեկանի արժէք կ'ունենայ, հին ատենը քիչ մարդիկ կրնային գիրք գնել, ուստի

կարգացողներն ալ հարկաւ քիչ էին, Ոյս պատճառաւ տպագրական արուեստին հնարուին աշխարհիս ամենէն նշանաւոր գէպքերուն մէկն է:

Կութթէմպերկ անուն անձ մը հնարեց տպագրութիւնը, բայց կրպատմուի թէ գիրքեր տպելու կերպը նախ քան զայն անուն անձը գտաւ: Սյս մար-

դը երբ Հոլանտայի Հարլէմ քաղքին բոլորաիքը անտառի մը մէջ ծառի մը տակ նստելով կտրոցով մը ծառին կեղեւը կը կտրէր դրօսներու համար, աեսաւ որ կտրուած կեղևին կտորը գիրքի մը ձև ունէր: Սյս տեսնելով սկսաւ ուրիշ կեղևի կտորներէ ուրիշ գիրքեր շինել, երբ տուն դարձաւ, կեղևէ գիրքին իրարու քով կապելով անոնց վրայ մեղան քսեց, և երբ այն գիրքերը թուղթի կտորի մը վրայ կ'իսեց, բառ մը ելաւ:

Տպագրական արուեստին սկզբնաւորութիւնն ահա այսպէս եղաւ:

ՈՒՐԱՆՈՒԹԵԱՄԲ ՀՆԱԶԱՆԳԻՒ

Կարապետ որ փոքր տղայ էր՝ տեսնելով որ ուրիշ տղայք իրենց տանեաց վրայ թուուցիկ կը հանէին օգը, ինքիքն ըսաւ, «Ես ալ այնպէս ընեմ»: Ուստի հօրաքերը քով երթալով ըսաւ, «Հօրաքոյր, հրաման կու տան որ տանիքը ելլելով թուուցիկ հանեմ օգը:»

Հօրաքոյրը կ'ուզէր միշտ գոհ ընել զԿարապետ, բայց տանեաց վրայ թուուցիկ հանելով խաղալը վատնող աւոր համարելով ըսաւ անոր, «Կարապետ, որդեակ, տանիքը մի ելլեր. կարծեմ թէ տանեաց վրայ թուուցիկով խաղալ վատնողաւ րէ. եթէ ինձի մաիկ կ'ընես, այս բանը մի ըներ:»

«Շատ աղէկ, հօրաքոյր,» ըսաւ Կարապետ, «տանիքը չեմ ելլեր:» Հօրաքոյրը գոհ եղաւ և ըսաւ, «Աղջիկ, տղաս. նայէ որ միշտ այսպէս հնազանդ ըլլաս:»

Օր մը մայրը Կարապետին հարցուց. «Կարապետ, ի՞նչ կ'ընես:» «Մայր, նոր պտուտակութիւն կը խաղամ,» ըսաւ Կարապետ: Բայց մայրն ըսաւ անոր, «Հիմա պտու տակը թող, և մանկիկը

դուրս հանելով քիչ մը պտրոցուր : Գնա դուռն կառքը պատրաստելու , ես մանկիկը կը բերեմ :

Կարապետ , «Շատ աղէկ , մայր» ըսելով պտուտակը ծօցը դրաւ , և իսկոյն զնոց մօրը պատուէրը կատարելու :

Ուրիշ օր մը նախաճաշի ատեն Կարապետ ըսաւ իր հօրեղբօրը . « Հօրեղբօր , այս առտու զիս խանութ կը տանին . դարձեալ տեսնել կ'ուզեմ զամբիւղները զորս երէկ տեսայ :

Հօրեղբայրն ըսաւ . « Շատ աղէկ , աղաս . եկու խանութ » Բայց մայրն անդին ըսաւ . « Կարապետ , քեզ այսօր խանութ չեմ կրնար զրկել , քիչ մը ետքը ինձի հետ դուրս պիտի ելլես . ուրիշ օր մը զնա խանութ : Կարապետ այս անգամ ալ , « Շատ աղէկ » ըսելով հնազանդեցաւ մօրը :

Կարապետ ինչ որ ընել ուզէ , եթէ հակառակ բան մը պատուիրուի անոր , միշտ « Շատ աղէկ » ըսելով պատասխան կու տայ : Ամենին հակառակաբանութեամբ զլուխ չերեքցուններ , և տանը մէջ ոչ զոք անհանգիստ կ'ընէ : Կարապետ երբէք պատճառ չի հարցուններ ըսելով . « Այս ինչ բանն ինչո՞ւ համար պիտի ըլնեմ կամ պիտի չընեմ » : Վերջապէս Կարապետ ու միայն հնազանդիլ , այլ և ուրախութեամբ հնազանդիլ սորված է :

տեսակը գիւղացուց պէս լոկ աշխատելու համար ստեղծուած է :

Հասարակ , այսինքն մեզը շինող , մեզուք իրենց փեթակը դնելու համար կամ մեզուանոցներու կարօտ են . բայց սե մեզուք անձամբ կը շինեն իրենց փեթակներուն տեղը , կամ իրենց բոյնը , Այս բոյնը կը բաղկանայ վեց կամ եօթը մաստ երկայն մամուց կոյտէ մը որ հողին մէջ իբր թէ թալուած կ'երևի . բայց եթէ ուշագրուութեամբ նայես , կը տեսնես որ մամուցն թեւերն այնպէս դեղեցիկ հիւսուած և այնպիսի ճարտարութեամբ շարուած են որ , թեւերուն միջոցներուն մէջ հողի փոքրիկ կտոր մ'անգամ չկայ , և բոյնին դրսի դին ծեփուած է տեսակ մը ծեփով որ ամենին խոնաութիւն չառներ :

Ծաղիկներէն քաղցը հիւթ հանելու կողմանէ սե մեզուն քան հասարակ մեզուն աւելի ճարտար է : Ծծմելով աւելի կը հանէ այն ծաղիկներէն որոնց մէջ հասարակ մեզուն ամենին քաղցը հիւթ չի գտներ :

Սե մեզուաց հօգն ալ դէպ իւրեանց ձագերը նշանաւոր է : Գիտնալով թէ երբ կը սպառի ձագերուն կերակուրը՝ վրան դոց բլիջներուն մէջ փոքրիկ ծակէ մը ներս ժամանակին կեր կ'ընեն : Որչափ ձագերը կը մեծանան , այնչափ բլիջները կը սկսին նեղ դալ անոնց , այնպէս որ ձագերն անհանգիստ կ'ըլլան , և շարունակ շարժելով բլիջներուն քովերը ճաթածներ կը պատճառեն : Գուրը բլիջներուն քով սպասող մեզուք , երբ ճաթած մը կը տեսնեն , իսկոյն մեղրամտով կը գոցեն ճաթածը :

Ժամանակաւ ամանի մը մէջ տասուերկու սե մեզու և տասը բլջով փեթակի կտոր մը դրուեցաւ , բայց փեթակին կտորին ձեռն այնպէս էր որ ամանին մէջ հաստատ չէր կենար : Այս պատճառաւ մեզունները բլիջներուն վրայ չկրնայով հաւաքուիլ , շատ անհանգիստ կ'ըլլային , Բայց սէրն որ աւելուանց ձագունս՝ պատճառ եղաւ որ այս անանիկները զարմանալի կերպով մը յիշեալ անպատեհութեան դարման գտան : Ամանին մէջ գտնուող մեզուններէն ոմանք փեթակի կտորին վրայ ելան , և իրենց ետևի ոտքերը փեթակի կտորին քովերուն վրայ , առ ձեի ոտքերն ալ ամանին յատակին վրայ հաստատելով , փեթակի կտորին ամանին մէջ շարժելն արգելեցին , և այսպէս միւս մեզուք կարող եղան փեթակի կտորին վրան հաւաքուիլ : Երբ օր այսպէս փոխուելով , օր մը փոքուելով , այսինքն փեթակին կտորին վրան կեցողները բան մ'ալ ըրին : Այն դեմքերով հաստատեցին փեթակին կտորը , և այնպէս զայն անշարժ բռնելու և զանոնց անհանգիստութեան միջոցները արգելեցին : Այս մեզունները մտածելով դասն , թէ ուստեք սորվեցան այս հնարքը : Կըրնանք ըսել թէ ոչ այս մեզուններն իրենց կարճ կենացը մէջ , ոչ ալ նոյն տեսակէն ուրիշ մեզուք աշխարհիս սկիզբէն ի վեր երբէք գտնուած էին այսպիսի դժուարութեան մը մէջ :

Թակի կտորին վրան հաւաքուիլ : Երբ օր այսպէս ըրին կարգաւ փոխուելով , այսինքն փեթակին կտորին վրան կեցողները վար կ'իջնէին փեթակին անշարժ բռնելու , և վարինները վեր կ'իջնէին անանց տեղ : Այս մեզուններն ուրիշ բան մ'ալ ըրին : Այն երբէք օրուան միջոցին մեղրամտէ գեղաններ պատրաստեցին , և այն դեմքերով հաստատեցին փեթակին կտորը , և այնպէս զայն անշարժ բռնելու աշխատութեանէն արգատեցան : Այս մեզունները մտածելով դասն , թէ ուստեք սորվեցան այս հնարքը : Կըրնանք ըսել թէ ոչ այս մեզուններն իրենց կարճ կենացը մէջ , ոչ ալ նոյն տեսակէն ուրիշ մեզուք աշխարհիս սկիզբէն ի վեր երբէք գտնուած էին այսպիսի դժուարութեան մը մէջ :

ՆԱՄԱԿԻ ԱՌՓՈՒՐ ՏՂԱՅՍ

2


ՄՕՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Սիրելի աղաս , ուրիշ նամակի մը մէջ փոքրիկ մարմնոց վրայ խօսեցայ : Մարմինդ միշտ մեծ էր : Ոչ , ժամանակաւ շատ փոքր էր : Երբ մարմնոց դեռ փոքր էր , քեզի մանկիկ անունը կը տրուէր :

Հիմա կրնաս երթալ , դալ , պառկիլ , ելլել . այն ատեն ասոնց և ոչ մին կրնայի ընել : Մանկիկները կրնան առանձին հագուիլ , կրնան քալել , կրնան խօսիլ . ոչ , ասոնց և ոչ մին կրնան ընել . Բայց մինչ , դուռն մանկիկ էիր , յանձնուած էիր մեկու մը որ քեզ կը խնամէր ,

Ո՞վ էր քեզ խնամողը : Քեզ խնամողը քու սիրելի մայրդ էր : Մայրդ քեզ մեծցուց իր դրկացը մէջ , քեզ սնուց , քեզ պարտէզին մէջ պտտեցնելով մաքուր օդ առնելու տար քեզի , քեզ կը լուար և կը հազցընէր : Կը սիրե՞ս մայրդ : Գիտե՞մ որ կը սիրես . բայց քեզի մայր տուողն ո՞վ է : Քեզի զթամ մայր մը տուողն Աստուած է :

Քիչ մը առաջ դուռն չկայիր աշխարհիս վրայ : Աստուած չինեց քու փոքրիկ մարմնոց և քեզ մօրդ տուաւ , մայրդ ալ քեզ սիրեց : Գարձեալ Աստուած է պատճառ որ մայրդ քեզ այնպէս սիրեց և խնամեց , վասն զի Աստուած լեցուցած է մօրդ սիրտը սիրով և գթութեամբ :




ՓԵԹԱԿԻ ԳՈՐԾ

ՍԵՒ ՄԵՂՈՒՔ

Սե մեզուք գիւղացուց կը նմանցըլին : Այս մեզուաց խումբերը կը բաղկանան երկու կարգ էր , անխայժոց արու , և չէզը , այսինքն ոչ արու և ոչ էզ , կարծուած քանէն մինչև երեք հարիւր մեզուններէ : Մեզուաց այս

Գլխած մայրդ քու փոքրիկ և տկար մարմինդ մաքուր լաթերով կը փաթթէր և որոցը կը դնէր : Երբ կու լայր , քեզի ուսելիք կու տար : Շատ անգամ նաև իր գրկաց մէջ որորելով կը քնացնէր զքեզ : քեզ ուրախացնելու համար զեղեցիկ բաներ կը ցուցնէր քեզի : Քաղիչ և խօսիչ քեզի նոյնպէս մայրդ սորվեցուց : Երբեմն կը համբուրէր զքեզ և քեզի անուշիկ անուներ կու տար : Մայրդ մինչեւ ցարդ գութ կը ցուցնէ՞ քեզի : Այո : Մայրդ քեզ աղէկ դպրոց մը դրաւ , և երբ իրիկուան տուն կու գաս , քեզի կերակուր կու տայ : Գիտե՞մ որ մայրդ ցորչափող է , քեզի գութ և սէր ցուցնելէ պիտի չդադրի :



ՎԵՆԵՏԻՅԻ ԻՇԽԱՆԵՆ ԿԱՌԱՐԱՏՈՅՑ

Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Ծովուն մէջ շինուած գեղեցիկ քաղաք մը կայ : Ծովն այս քաղաքին լայն և նեղ փողոցներուն մէջ մերթ կը բարձրանայ և մերթ կը ցածնայ , և ծովային խոտերը քաղաքին պալատներուն կճեայ սիւներուն կը փաթթուին : Գուռներուն առջևը ոչ մարդու հետք և ոչ ուրիշ նշան մը կը տեսնուի , վասն զի այն քաղաքը տանող ճամբաները ծովուն վրայէն կ'անցնին : Մարդ մը ծովու վրայ լողացող քաղաք մը երթալու պէս կ'երթայ հոն : փողոցներուն մէջ պտտել ուղղը , երազին՝ մէջ թռչող մարդու մը պէս , անձայն և շատ արագ պալատներու և եկեղեցիներու մէջտեղէն դառնալով կ'երթայ նաւակներով : փողոցներուն երկու կողմը ժամանակաւ աշխարհիս վաճառականութեան վրայ տիրող վաճառական թագաւորներու պալատները կան , աղքատի տնակ մը բնաւ չի տեսնուիր : փողոցներու մէջ բազմութեան զարնուիլ , թաց ոտքով ցետիկերը կոխուտել չկայ , վասն զի ամէն մարդ տունէ տուն , կամ իր գործին տեղը կ'անուշ կոչուած նաւակներով կ'երթայ :

Այս քաղաքը «Ծովու հարս» կոչուած Վենետիկ քաղաքն է : Քաղաքը ջրանցներով իրարմէ զատուած 72 ճախճախուտ կղզիներու վրայ շինուած է : Վենետիկի մէջ տեղէ տեղ երթալու համար , փոխանակ հասարակ կա-

ռայ , հանրակառայ և թրակայի , կոնտոյաներ կը գործածուին :

Ասկէ երկու հարիւր տարի առաջ Վենետիկի մէջ շատ առուտուր կար , և Վենետացւոց նաւատորմիլը բոլոր ծովերու կ'իշխէր : Այնտե՛ն Վենետացիք թուրքիոյ ծովեզերքը վաճառականաւերու տորմիլներ կը զրկէին , վասն զի այս կողմերուն գլխաւոր առուտորն անոնց ձեռքն էր : Վենետացւոց համբաւը շատոնց կորսուած է , բայց ա՛նոնց քողաքը , զարմանալի դրիցը պատճառաւ , իտալիոյ ամենէն երևելի քաղաքը կը համարուի :

ԵՐԿՆԻՑ ԿԱՄԱՐԻՆ ՎՐՈՑ ՓԱՅՈՂ ՓՈՌՐԻԿ ԶԱՆԵՐԸ

Եթէ ինծի հետ աստղերուն կը նայիք , ձեզի կընամ այնպիսի բաներ պատմել որ աւելի զարմանալի են քան վիպասանաց գիրքերուն մէջ պատմուած հրաշալիքները , մանաւանդ որ այն գիրքերուն մէջ յիշուած հրաշալի բաներուն շատը ճշմարիտ չէ , բայց այն բաները որ ես պիտի պատմեմ՝ բոլորն ալ ճշմարիտ են :

Այն անձինք որ իրենց բոլոր կենացը մէջ աստղերը կը դիտեն և անոնց զարմանալի յատկութիւնները կը քննեն՝ կը հաստատեն թէ մերկ աչօք տեսնուած աստղերուն թիւն իբր երեք հազար է . բայց երբ դիտակով կը նայուի , աւելի քան քսան միլիոն աստղ

Բայց անգամ մը մտածէ այս մայրը քեզի տուող Աստուածը : Աստուած զքեզ ամայի և անմարդի անապատ մը չնետեց , այլ սիրելի մօր մը ինամոցը յանձնեց : Բայց այս մայրը կընայ քեզ կենդանի պահել : Ոչ : Մայրդ կընայ քեզի կերակուր տալ , բայց չի կընար շնչառութիւն տալ քեզի : Եթէ Աստուած որ ամէն բոլոր կը հոգայ քեզ՝ այս օդը շարունակ չպարգևէ քեզի , շունչդ կը սպառի և կը մեռնիս :

Մօրդ շնորհակալ կ'ըլլաս որ քեզի այնչափ սէր և գութ կը ցուցնէ : Գիտե՞մ որ կ'ըլլաս : Շատ անգամ կ'ըսես անոր . «Շնորհակալ եմ , մայր .» երբեմն նաև անոր պարանոցն իյնալով կ'ըսես . «Մայր , քեզ շատ կը սիրեմ :» Հապա այս մայրը քեզի տուող և քեզ միշտ պահող և ինամոց Աստուծոյ շնորհակալ չե՞ս ըլլար : Չե՞ս ըսեր անոր . «Աստուած իմ , ի՛նչ մեծ շնորհք և ողորմութիւն կ'ընես ինծի . դո՛հու թիւն և շնորհակալութիւն կը մատուցանեմ քեզի :»

Աստուած կը լսէ՞ շնորհակալութեան ձայները որ քու փոքրիկ բերնէդ կ'ելլեն : Այո , կը լսէ և հաճութեամբ կը լսէ :



ՅՂԱՅԻՔ ԵՐԿԵՆԻՔ ԿԸՆՍՈՒՆ

կը նշմարուի երկինքը : Երբ գիշերնե-
րը երկինք կը նայինք, տեղ տեղ եր-
կու կամ երեք աստղ միայն կը տես-
նենք . բայց երբ այն տեղերը դիտա-
կով կը նայինք, կը տեսնենք գունդ-
գունդ աստղեր : Նոյնպէս դիտակով
կը տեսնենք որ աստղերէն ոմանք կըը-
կին են, այսինքն իրարու գրեթէ կից
երկու աստղ են : Գարձեալ աստղերը
գոյնզոյն են . ոմանք կանանչ են, ո-
մանք մանուշակագոյն, այլք կապոյտ :
Կան նաև որ կարծիր կամ ուրիշ գու-
նով են : Աստեղագէտք աստղերէն
շատերը հասարակած աստղ կ'անուանեն :
Կան քանի մը աստղեր որ մեր երկրին
պէս արեգական բոլորտիքը շրջան կ'ը-
նեն : Ասոնք հաւր կը կոչուին : Այն
աստղերը որ շողշողուն կ'երևին հաս-
տատուն աստղեր են : Եթէ ուշադրու-
թեամբ դիտէք, պիտի տեսնէք որ
աստղերէն ոմանց լոյսը շողշողուն չէ,
այսինքն չերեբար . այս աստեղք մե-
լորակ են, բայց առանց դիտակի նա-
յելով երկու կամ երեք մոլորակ հա-
զիւ կրնանք տեսնել :

Հիմա գանք այն խնդրոյն զոր գիտ-
նալու հետաքրքիր ենք այն օրէն ի
վեր որ աստղերը սկսանք զննել, այս-
ինքն կ'ուզենք գիտնալ թէ ի՞նչ են
աստեղք : Նախ արեգակը քննենք :
Արեգակն այնպէս տաք է, որ մեզի
լոյս և ջերմութիւն կու տայ, խոտերն
ու ծառերը կ'աճեցնէ, մինչև անգամ
կրնայ զանոնք այրել : Արեգակը մէկ
միլիոն երկու հազար անգամ աւելի
մեծ է քան մեր այս ահագին երկի-
րը, և թէպէտ մենէ միլիոնաւոր մլոն
հեռու է, մեր աչքերն այնպէս կը խը-
տողէ որ անոր չենք կրնար շիտակ նա-
յել : Արդ աստղերն ալ մէյնէկ արե-
գակ են : Ամէն գիշեր երկինքը զար-
գարող այն հազարաւոր հաստատուն
աստեղաց իւրաքանչիւրը մէյնէկ արե-
գակ է մեր արեգական չափ կամ քան
զնա աւելի մեծ : Այն պայծառ և շող-
շողուն մարմիններուն քով մեր երկի-
րը շատ փոքր գնտակ է : Մեր երկ-
րին ու անոնց մէջտեղի հեռաւորու-
թիւնն այնչափ է որ մեր խելքը կամ

երեւակայութիւնը չի կրնար բեր-
նել : Երկնային մարմնոց վրայ տե-
ղեկութիւն ստանալու գրաւեալ
մարդիկ երկրիս և արեգական
մէջտեղի միջոցը չափած են, բայց
երկրիս և հաստատուն աստեղաց
մէջտեղի միջոցը չեն կրնար չա-
փել : Այն աստղերուն հեռաւորու-
թիւնը մենէ այնչափ է որ, գի-
տուններէն ոմանց խօսքին նայելով,
հաստատուն աստղէ մը մեզի եկող լոյ-
սը քանի մը հազար տարուան մէջ հա-
սած է մեզի : Հաստատուն աստեղք
կամ արեգակունք մեզի այսչափ մանր
կ'երկին, վասն զի յանհուն հեռու են
մենէ : Եթէ մեր արեգակն ալ մենէ
նոյնչափ հեռու ըլլար, աստղերուն պէս
փոքր պիտի երևէր մեզի :

Կան աստղեր որ երթալով կ'աղօ-
տանան կամ կը պայծառանան : Աստե-
ղագէտք երեսուն, քառասուն, յի-
սուն, հարիւր տարի աստղերուն պայ-
ծառութիւնը գիտելով հաղիւ կարող
կ'ըլլան անոնց լուսոյն փոխուիլը հաս-
կնալ : Կան աստղեր որ գրեթէ մարե-
լու մօտ երևնալով, յանկարծ նորէն
լուսաւորուելով, տասը, տասնհինգ
և քսան տարի պայծառ կը փայլին :

Հաստատուն կոչուած աստեղք, ինչ-
պէս երբեմն կը կարծուէր, անշարժ
չեն մնար իրենց տեղերը, այլ այն բու-
րաւոր աստեղք ալ տիեզերաց անհուն
միջոցին մէջ կամայ և միօրինակ շարժ-
ման մէջ են : Կան հաստատուն աս-
տղեր որ երկու կամ երեք հարիւր տա-
րուան մէջ քիչ մը փոխած են իրենց
նախկին տեղերը : Ասկէ կը տեսնուի
որ բոլոր հաստատուն կարծուած աս-
տեղք ունին յամբ շարժում մը :

Շատ տարիներ անգամ մը մեր երկ-
րին մօտենալով դարձեալ հեռացող
գիտար աստեղաց, ասուպ կամ թը-
ուիչ կոչուած լոյսերու, համաստեղու-
թեանց որ աստղերու խումբեր են ո-
րոնց արջ, առիւծ, այծեղջիւր և ուրիշ
այլևայլ անուններ տուած են աստեղա-
գէտք, և աստեղագիտութեան վերա-
բերեալ ուրիշ հարիւրաւոր բաներու
վրայ չխօսեցայ : Բայց կը յուսամ որ
աստեղաց վրայ այսչափ տեղեկութիւն
առնելէն ետքը, անձամբ պիտի աշ-
խատիք այս գեղեցիկ գիտութեան
վրայ ուրիշ շատ բաներ սորվելու :

ԱՌԵՂՄՈՒՅԸ ՄԸ

Վարը ցուցուած անձանց և տեղեաց
անուններուն առաջին գիրերը խօսք
մը կը կազմեն :

1. Մարդոց ամենէն հեղին անունն է :
 2. Իսրայելի դատաւորներէն մին որ
մահացու վերք ընդունեցաւ իր գլու-
խոյն վրայ կնոջ մը արձակած քարէն :
 3. Աստուծոյ հաւատարուն համար
իր ընտանեօրը մահուանէ ազատող
անձին անունն է :
 4. Հինգ քաղաքներէն մէկուն ա-
նունն է, որ կործանեցան այն պատե-
րագին օրը որ արեգակը կեցաւ մին-
չև որ Իսրայելացիք յաղթեցին :
 5. Կանանց մէջ օրհնելոյն անունն է :
 6. Ծերունի մարգարէ կնոջ մը ա-
նունն է :
 7. Իսրայելի տասուերկու ցեղերէն
մէկուն անունն է :
 8. Մովսրի թագաւորաց մէկուն ա-
նունն է :
 9. Իսմայելի հաւուն անունն է :
 10. Մարդ մը որ մահ չճաշակեց :
 11. Առաջին մարդասպանին անունն
է :
 12. Չորրորդ որդիէն Յակոբայ ա-
ռաջին թոռան անունն է :
 13. Քրիստոսի գործած ամենէն մեծ
հրաշքներէն միոյն առարկան է :
 - 14 և 15. Այն քաղաքին անունն է
զոր արդար անձ մը, առանց գիտնա-
լու թէ ուր պիտի երթար, թողուց
Աստուծոյ հրամանաւ :
 16. Այն թագաւորին անունն է որ
Աստուծմէ մեծ հրաշքներ տեսաւ,
բայց և այնպէս խտտացուց իր սիրտը :
 - 17 Այն մարդուն անունն է որոյ
համար ըսուած է թէ « իր յանգընու-
թեանը մէջ միշտակ չկորսուեցաւ » :
 18. Յարեթի թոռներէն մէկուն ա-
նունն է :
 19. Ծնանելին առաջ Աստուծոյ նը-
ւերուած անձի մը անունն է :
 20. Աստուծոյ սիրելի ազգի մը ա-
նունն է :
 21. Ժամանակ մը եղան պէս խոտ
ուտող և դաշտերու մէջ բնակող թա-
գաւորին անունն է :
- Այս առեղծուածին ամբողջ խօսքը
կը ցուցնէ դատապարտութեան վճիռը
զոր Աստուած տուաւ իր թշնամիներէն
մէկուն դէմ :

ԱՒԵՏԱԲԵՐՆԵՐՈՒՆ ԳԻՆԵՐԸ

Ամսական Աւետարեթին գինն է փոս-
թայի ծախքով տարին 1/3 արծաթ մէ-
ծիտիէ կանխիկ, և մէկ թերթը 30 փա-
րա է :

Շաբաթական Աւետարեթին գինն է
փոսթայի ծախքով տարին 1 1/2 արծաթ
մէծիտիէ կանխիկ :

Ամերիկայի միսիսարաց ընկերութեան կողմէն
Խմբագիր ձ. Ք. ԿԻՆ
Ֆիլադելֆիայ եօգուշու, Ամերիկան Խան
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՅՂԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱՌՔ ՊՈՅԱՅԱՆ